**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ(ԷԱՃ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

30-ը հունվարի 2019թ.
ժամը $12^{00}$

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:

**Քարտուղար՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. ***«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի, «Արֆարմացիա» ՓԲԸ-ի և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի*** կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. *«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի, «Արֆարմացիա» ՓԲԸ-ի և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի* կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

1.1 **«Արֆարմացիա» ՓԲԸ-ի և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում և կարգով Eauction համակարգի միջոցով շտկվեցին առկա անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց վերջիններիս կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

**«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի** կողմից **Eauction** համակարգի միջոցով սահմանված ժամկետում ներկայացվեց գնահատող հանձնաժողովին ուղղված գրություն և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածք, որտեղ կրկին երևում է, որ մասնակիցը եկամուտների գծով ունի ***6,331,558 (վեց միլիոն երեք հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր հիսունութ)*** դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ: Հաշվի առնելով նշված հանգամանքը, գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկվեց:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, գանահատող հանձնաժողովը որոշեց **«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի** տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.3 Հանձնաժողովը որոշեց՝ 2-րդ, 36-րդ և 43-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

1.4 Հիմք ընդունելով էլեկտրոնային գնահատման արդյունքները և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հրավերով պահանվող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.5 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11$^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ա. Նազարյան |
| Գնահատող | Վ. Վահանյան |
| Գնահատող | Մ. Գալստյան |
| գնահատող | Հ. Ավետիսյան |
| Քարտուղար | Ա. Մաղաքյան |